Հաստատված է

Հայաստանի Հանրապետության
Սյունիքի մարզպետի 30.10.2000 թ.
թիվ 72 որոշմամբ

Է. Բաղանդյան

Գրանցված է
ՀՀ ձեռնարկությունների պետական
ռեգիստրի կողմից
Գրանցման թիվ 27.140.00680
Գրանցման օրը 03.12.96թ.

Վկայական 014.030019
թիվ---3---փոփոխության գրանցման օրը՝
«30»---12---2000 թ
Պետռեգիստրի Կապանի տարածքային
բաժնի պետ Կ.Հովհաննիսյան

«ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՆՅԱՐԴԱՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) իրավաբանական անձ է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի:

Ընկերության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմնի Սյունիքի մարզպետի: Ընկերությունը ստեղծվել է ՀՀ Սյունիքի մարզպետի 2000թ-ի հոկտեմբերի 30-ի թիվ 72 որոշմամբ, ՀՀ Սյունիքի մարզի «Նյարդահոգեբուժական մարզային դիսպանսեր» պետական փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորման ճանապարհով:

Ընկերությունը հանդիսանում է ՀՀ Սյունիքի մարզի «Նյարդահոգեբուժական մարզային դիսպանսեր» պետական փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդը:

1.2 Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով (այսուհետև՝ ՕՐԵՆՔ), այլ օրենքներով ու իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.3 Հիմնադրի և Ընկերության հարաբերությունները կարգավորվում են ՀՀ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.4 Ընկերության ֆիրմային անվանումն է

հայերեն լրիվ՝ ՀՀ Սյունիքի մարզ «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերություն

կրճատ՝ ՀՀ Սյունիքի մարզ «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ

ռուսերեն լրիվ՝ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО ЗАКРЫТОГО ТИПА <<СЮНИКСКИЙ ОБЛАСТНОЙ ПСИХОНЕВРОЛОГИЧЕСКИЙ ДИСПАНСЕР>> СЮНИКСКОГО МАРЗА

կրճատ՝ АОЗТ << СЮНИКСКИЙ ОБЛАСТНОЙ ПСИХОНЕВРОЛОГИЧЕСКИЙ ДИСПАНСЕР >> СЮНИКСКОГО МАРЗА

անգլերեն լրիվ՝ CLOSE JOINT-STOCK COMPANI

<< REGIONAL PSYCHIATRIC-NEUROLOGICAL DISPANSERY >> of SYUNIK MARZ

կրճատ՝ CJSG << REGIONAL PSYCHIATRIC-NEUROLOGICAL DISPANSERY >> of SYUNIK MARZ

1.5 Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝

ՀՀ, Սյունիքի մարզ, Կապան, Բաղանիսի 48:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1 Ընկերության ստեղծման նպատակը ձեռնարկատիրական գործունեություն, այդ թվում՝ պետական պատվեր և վճարովի ծառայություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումն է:

2.2 Իր առջև դրված նպատակներն իրականացնելու համար Ընկերությունը զբաղվում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ հիմնական տեսակներով՝

2.2.1 Հոգեկան հիվանդությունների ախտորոշում, հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց մասնագիտացված բժշկական օգնության և սպասարկման կազմակերպում:

2.2.2 Հոգեկան հիվանդների սոցիալ-հոգեբանական վերականգնման կազմակերպում և իրականացում:

2.2.3 Բնակչության շրջանում մասնագիտացված հոգեբուժական նախապահպանական աշխատանքների իրականացում:

2.2.4 Հոգեկան հիվանդությունների ախտորոշման և բուժման ժամանակակից մեթոդների, բժշկական նոր տեխնիկայի, դեղամիջոցների ներդրում:

2.2.5 Հոգեկան հիվանդությունների վաղ բացահայտման և ժամանակին բուժման միջոցառումների իրագործում:

2.2.6 Գիտական և գիտա-բժշկական հետազոտությունների իրականացումը:

2.2.7 Ժամանակավոր և կայուն անաշխատունակության փորձաքննության իրականացում:

2.2.8 Բժշկական մասնագետների դիպլոմային և հետդիպլոմային պատրաստման և վերապատրաստման մասնակցությունը ըստ սահմանված կարգի:

2.2.9 Բժշկական ստանդարտների մշակման և ներդրման մասնակցությունը:

2.2.10 Բնակչության բժշկահիգիենիկ դաստիարակության և ՀՀ առողջապահության նախարարության կողմից արտոնված այլ կանխարգելիչ միջոցառումների իրականացումը:

2.2.11 Առողջապահության կազմակերպման, կառավարման, ֆինանսավորման և տնտեսվարման ժամանակակից մոդելների, մեխանիզմների ու նորմատիվների մշակման ու ներդրման մասնակցությունը:

2.2.12 Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև արտասահմանյան երկրների առողջապահական և այլ հիմնարկների, ձեռնարկությունների հետ համագործակցությունը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.2.13 Հիմնադրի թույլտվությամբ առողջապահությանը հարակից կամ նրա զարգացմանը նպաստող և ՀՀ օրենդրությամբ չարգելված արտադրատնտեսական գործարարական և այլ գործունեության իրականացումը:

2.3 Ընկերությունը կարող է իրականացնել սույն կանոնադրությամբ չնախատեսված, օրենքով և այլ իրավական ակտերով չարգելված ցանկացած ձեռնարկատիրական գործունեություն: Օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված գործունեության առանձին տեսակներով՝ Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի (հատուկ թույլտվության) առկայության դեպքում:

3.ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Ընկերությունը համարվում է ստեղծված և կարող է գործել Ընկերության սահմանված կարգով պետական գրանցման պահից:

3.2 Ընկերությունն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բանկային հաշիվներ բացել ՀՀ և օտարերկրյա պետությունների բանկերում ինչպես ՀՀ արժույթով, այնպես էլ արտարժույթով:

3.3 Ընկերությունն ունի իր ֆիրմային անվանմամբ հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով, ՀՀ զինանշանի պատկերով կլոր կնիք, դրոշմակնիք և ձևաթղթեր, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային, առևտրային և այլ նշաններ:

3.4 Ընկերությունն իր պարտավորություններով պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

Ընկերությունը պատասխանատու չէ Հիմնադրի պարտավորությունների համար:

Հիմնադիրը պատասխանատու չէ Ընկերության պարտավորությունների համար:

3.5 Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար:

Ընկերությունը պատասխանատվություն չի կրում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների պարտավորությունների համար:

3.6 Ընկերությունն իրավունք ունի.

- ՀՀ օրենսդրությամբ չարգելված բոլոր ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել, օգտագործել և տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը.
- ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով.
- օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և բաշխել արժեթղթեր.
- ընկերության բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով ձեռք բերել իր կողմից բաշխված բաժնետոմսերի մի մասը.
- ավելացնել բաշխված բաժնետոմսերի քանակը՝ փոխարկելով Ընկերության կողմից բաշխված բաժնետոմսը երկու կամ ավելի նույն ձևի և տեսակի բաժնետոմսերի՝ համապատասխանաբար կրճատելով դրանց անվանական արժեքը.

- կրճատել տեղաբաշխված բաժնետոմսերի քանակը փոխարկելով Ընկերության կողմից տեղաբաշխված երկու կամ ավելի բաժնետոմսերը մեկ նույն ձևի և տեսակի բաժնետոմսի համապատասխանաբար ավելացնելով այդ բաժնետոմսերի անվանական արժեքը.
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պայմանագրեր և կրել պարտավորություններ.
- ինքնուրույն ընտրել իր արտաքին ձեռնարկատիրական գործունեության վարման կարգը, այն իրականացնել անմիջականորեն, առանց միջնորդի կամ այլ կազմակերպության միջոցով.
- ունենալ միջոցներ արտարժույթով, դրանք ստանալ որպես արտաքին ձեռնարկատիրական գործունեության արդյունք և ՀՀ օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ձեռք բերել և ինքնուրույն տնօրինել, այդ թվում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վաճառել պետությանը, կազմակերպություններին կամ քաղաքացիներին.
- ինքնուրույն պլանավորել իր գործունեությունը, որոշել թողարկվող արտադրանքի, կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների ծավալը, գները, իրենց մատակարարներին և արտադրանքը սպառողներին.
- ստեղծել մասնաճյուղեր և բացել ներկայացուցչություններ Օրենքի և այլ իրավական ակտերի դրույթներին համապատասխան .

3.7 Ընկերությունը պարտավոր է .

- օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել հաշվապահական հաշվառում և ներկայացնել վիճակագրական հաշվետվություն.
- ապահովել Ընկերության փաստաթղթերի (Ընկերության կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Ընկերության ներքին փաստաթղթերի, մասնաճյուղերի և նեկայացուցչությունների կանոնակարգերի, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, կառավարման մարմինների նիստերի արձանագրությունների , Օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը:

4.ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

4.1Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 2691,0 հազ. դրամ, որը կազմում է 42 սովորական բաժնետոմս , մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 64071 դրամ:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը բաշխված են և պատկանում են Հիմնադրին:

4.2 Ընկերությունը կարող է կանոնադրական կապիտալի չափը փոխել բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ուժի մեջ է մտնում այդ կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելուց և սահմանված կարգով պետական գրանցում ստանալու պահից:

4.2.1 Կանոնադրական կապիտալի ավելացումը:

Ընկերության կանոնադրական կապիտալի չափը կարող է ավելացվել Ընկերության բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացմամբ կամ լրացուցիչ բաժնետոմսերի թողարկմամբ, եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ իրացված են:

Ընկերությունը կարող է որոշում ընդունել լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին Ընկերության կանոնադրության մեջ հայտարարված բաժնետոմսերի քանակի սահմաններում և միայն նախկինում բաշխված բաժնետոմսերի լրիվ վճարված լինելու դեպքում:

Ընկերությունը իր գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո կարող է

-շահույթի մի մասը ներդնել կանոնադրական կապիտալում՝ տեղաբաշխելով նոր բաժնետոմսեր

-իրեն պատկանող կանոնադրական կապիտալի չափից ավելի գույքը կամ դրա մասը փոխանցել կանոնադրական կապիտալ:

Ընկերությունը չի կարող բաժնետոմսեր թողարկել իր ձեռնարկատիրական գործունեությամբ առաջացած պարտքերի մարման համար:

4.2.2 Կանոնադրական կապիտալի նվազեցումը:

Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը կարող է կատարվել՝

-բաժնետոմսերի անվանական արժեքի նվազեցնելու միջոցով.

-բաժնետոմսերի ընդհանուր քանակի պակասեցնելու,այդ թվում Օրենքով նախատեսված դեպքերում դրանց մի մասի գնելու և մարելու միջոցով:

Ընկերությունն իրավունք չունի նվազեցնել Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված Ընկերության նվազագույն կանոնադրական կապիտալի չափից:

Կանոնադրական կապիտալի չափի նվազեցման հետևանքով մեկ տարուց ոչ ավելի ժամկետում Ընկերությանը չվերադարձված բաժնետոմսերը կարող են համարվել անվավեր: Դրանց փոխարեն Ընկերությունը կարող է թողարկել նոր բաժնետոմսեր:

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման և Ընկերության կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու մասին որոշումն ընդունվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման պատճառով բաժնետիրոջ փայաբաժնի վճարումները կատարվում են Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների պետական գրանցումից հետո:

5.ԲԱԺՆԵՏՈՄՄԵՐ և ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐ

5.1Ընկերությունը կարող է տեղաբաշխել օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված արժեթղթեր:

5.2 Ընկերությունն իրավունք ունի տեղաբաշխել միայն սովորական բաժնետոմսեր:

Ընկերության կողմից թողարկված սովորական բաժնետոմսերի անվանական արժեքը պետք է լինի միևնույնը:

5.3Ընկերության բաժնետոմսերը տեղաբաշխվում են Ընկերության բաժնետերերի ռեեստրում բաժնետիրոջ անձնական հաշվում գրանցման տեսքով:

5.4 Ընկերության Հիմնադրին Ընկերության պետական գրանցումն իրականացնելուց և բաժնետոմսերի արժեքը լրիվ վճարելուց հետո Ընկերության կողմից տրվում են բաժնետոմսերի հավաստագիր (սերտիֆիկատ) :

Հավաստագիրը պատրաստվում է տպագրական եղանակով և պետք է պարունակի Օրենքով սահմանված ռեկվիզիտներ:

Հավաստագիրը պետք է համապատասխանի ՀՀ իրավական ակտերով սահմանված արժեթղթերի պաշտպանվածության պահանջներին:

5.5 Բաժնետոմսն անբաժանելի է :

5.6 Ընկերության լրացուցիչ տեղաբաշխված բաժնետոմսերը պետք է վճարեն դրանց տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ, քան դրանց տեղաբաշխման պահից մեկ տարվա ընթացքում:

Ընկերության բաժնետոմսերին և այլ արժեթղթերի դիմաց վճարումը կարող է իրականացվել դրամով, արժեթղթերով , այլ գույքով կամ գույքային իրավունքով, կամ այլ իրավունքներով, որոնք ունեն դրամական գնահատական:

Ընկերության բաժնետոմսերը և այլ արժեթղթերը, որոնց դիմաց վճարումն նախատեսված է ոչ դրամական միջոցներով, դրանց ձեռք բերման ժամանակ վճարվում են լրիվ արժեքով:

Ընկերության հիմնադրման ժամանակ, ինչպես նաև լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի դիմաց վճարվող գույքի դրամական գնահատականը սահմանվում է Հիմնադրի կողմից:

Ընկերության տրամադրության տակ փոխանցված բաժնետոմսերը (չվճարված կամ հետ վերադարձված) չեն տալիս ձայնի իրավունք , հաշվի չեն առնվում ձայների

հաշվարկման ժամանակ, այդ բաժնետոմսերով շահաբաժիններ չեն հաշվարկվում: Այդ բաժնետոմսերը պետք է իրացվեն Ընկերության կողմից՝ դրանք Ընկերությանը փոխանցելու պահից մեկ տարվա ժամկետում: Հակառակ դեպքում Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը պետք է որոշում ընդունի նշված բաժնետոմսերի մարման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի փոփոխման մասին:

5.7. Ընկերությունն ունի պահուստային կապիտալ:

Ընկերության շահույթից մասհանումների հաշվին ստեղծվում է պահուստային կապիտալ:

Պահուստային կապիտալի չափը կազմում է՝ կանոնադրական կապիտալի 15 տոկոսը:

Եթե պահուստային կապիտալը կազմում է Ընկերության կանոնադրությամբ սահմանվածից ավելի փոքր մեծություն, հատկացումներն այդ կապիտալին կատարվում են շահույթի 5 տոկոսի չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից:

Պահուստային կապիտալն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և ընկերության բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը այդ նպատակին չի բավարարում:

Պահուստային կապիտալը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար (բացի օրենքով սահմանված դեպքերից):

5.8 Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերությունը կարող է ստեղծել նաև սպառման, կուտակման, սոցիալական զարգացման և այլ հիմնադրամներ:

5.9 Եթե երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից, Ընկերությունը պարտավոր է հայտարարել և սահմանված կարգով գրանցել իր կանոնադրական կապիտալի նվազումը: Եթե Ընկերության նշված ակտիվների արժեքը պակաս է օրենքով սահմանված կանոնադրական կապիտալի նվազագույն չափից, Ընկերությունը ենթակա է լուծարման:

Եթե սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցման կամ Ընկերության լուծարման մասին որոշում չի ընդունվել, ապա Ընկերության Հիմնադիրը, պարտատերը, ինչպես նաև պետության կողմից լիազորված մարմիններն իրավունք ունեն պահանջել Ընկերության լուծարումը դատական կարգով:

6. ՀԻՄՆԱԴՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1 Ընկերության յուրաքանչյուր բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները:

Բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերը՝ Հիմնադիրը իրավունք ունի՝

-իրականացնել Ընկերության կառավարումը .

-ստանալ շահաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից.

-ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, այդ թվում՝ ծանոթանալ հաշվապահական հաշվեկշռին, հաշվետվություններին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը.

-Ընկերության ընդհանուր ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի (անձանց).

-հանդես գալ առաջարկություններով ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում.

-Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող լրիվ վճարված բաժնետոմսերի ձայների չափով.

-Ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո Ընկերության մնացած գույքի մասը կամ դրա արժեքը.

-Ընկերության միջոցների հաշվին Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում անվճար ստանալ համապատասխան քանակությամբ բաժնետոմսեր.

-օգտվել օրենքով և Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

6.2 Հիմնադիրը (բաժնետերը) պարտավոր է՝-

- սույն կանոնադրությամբ սահմանված կարգով գումարել ընկերության ընդհանուր ժողով՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով.
- Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով կատարել դրամական և գույքային ներդրումներ.
- չհրապարակել ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնի տեղեկատվությունը:

7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1 Ընկերությունն իրավունք ունի հայտարարել (որոշում ընդունել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային և (կամ) տարեկան շահաբաժինների վճարման մասին:

Շահաբաժինները վճարվում են Ընկերության տվյալ տարվա ընթացիկ զուտ շահույթից:

Ինչպես տարեկան, այնպես էլ եռամսյակային և կիսամյակային շահաբաժիններ վճարման, շահաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում ընդունել շահաբաժիններ չվճարելու կամ ոչ լրիվ չափով վճարելու մասին: Այդ որոշումների գործունեության ժամկետը սահմանվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից, բայց չի կարող մեկ տարուց ավելի լինել:

Շահաբաժինների վճարման ամսաթիվը սահմանվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի շահաբաժիններ վճարելու մասին որոշմամբ:

7.2 Ընկերությունն իրավունք չունի հայտարարել (որոշում ընդունել) բաշխված բաժնետոմսերի շահաբաժինների վճարման մասին, եթե՝

- լրիվ չի վճարվել Ընկերության կանոնադրական կապիտալը.
- շահաբաժիններ վճարելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ Ընկերության տնտեսական վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկացման) հայտանիշներին կամ նշված հայտանիշներն ի հայտ կգան շահաբաժինների վճարման հետևանքով:
- Ընկերության զուտ ակտիվների արժեքը փոքր է Ընկերության կանոնադրական կապիտալի և պահուստային կապիտալի գումարից կամ այդ գումարից փոքր կդառնա շահաբաժինների վճարման հետևանքով:

8.ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

8.1Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն է:

Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի ընդհանուր ժողով՝ բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողով:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո (2-3 ամսվա ընթացքում):

Բաժնետերերի տարեկան ժողովից բացի գումարվող Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ: Ընկերության արտահերթ ժողովներ գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

Ընկերության ինչպես տարեկան, այնպես էլ արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են Հիմնադրի կողմից:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովներում նախագահում է Հիմնադիրը կամ նրա կողմից նշանակված անձը:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու իրավունք ունեն ընկերության գործադիր մարմինները, ինչպես նաև վերստուգող հանձնաժողովի անդամների և աուդիտ իրականացնող անձը:

`8.2 Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում՝

1.Ընկերության կանոնադրության հաստատումը, նրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ, նրա կանոնադրական կապիտալի չափը փոփոխելը,

2. Ընկերության բաժնետերերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով իր կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի մի մասի ձեռք բերումը.

3. տեղաբաշխված բաժնետոմսերի քանակի ավելացումը՝ փոխարկելով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերը երկու կամ ավելի տեսակի բաժնետոմսերի՝ համապատասխանաբար կրճատելով դրանց անվանական արժեքը.

4. բաշխված բաժնետոմսերի քանակը կրճատումը՝ փոխարկելով Ընկերության կողմից տեղաբաշխված երկու կամ ավելի բաժնետոմսերը մեկ նույն ձևի և տեսակի բաժնետոմսի՝ համապատասխանաբար ավելացնելով այդ բաժնետոմսերի անվանական արժեքը.

5. Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) անդամների ընտրությունն ու նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցնելը.

6. Ընկերության գործադիր մարմիններ կազմավորելը և նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելը.

7. Ընկերության տարեկան հաշվետվությունները, հաշվապահական հաշվեկշիռները, շահույթների և վնասների հաշիվները հաստատելը ու նրա շահույթները և վնասները բաշխելը.

8. Ընկերությունը վերակազմակերպելու կամ լուծարելու մասին որոշում ընդունելը, լուծարային հանձնաժողովի նշանակումը, լուծարային հաշվեկշիռների հաստատումը.

9. Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.

10.Ընկերության պահուստային կապիտալի օգտագործումը.

11. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

12. Բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացումը կամ մեծացումը.

13. Ընկերության գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը.

14. Ընկերության կողմից բաշխված բաժնետոմսերի ձեռք բերումը և հետ գնումը.

15. Ղեկավար պաշտոնատար անձանց աուդիտն իրականացնող անձի աշխատանքի վարձատրման պայմանների որոշումը.

16. Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատումը.

17. Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը.

18. Այլ կազմակերպությունների մասնակցելը օրենքով սահմանված կարգով.

19. Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.

20. Օրենքով նախատեսված այլ հարցեր:

8.3 Ընկերության ժողովի իրավասություններն իրականացնում է Հիմնադիրը (բաժնետերը) կամ նրա կողմից լիազորված անձը՝ Հիմնադրի կողմից սահմանված լիազորությունների շրջանակում:

Հիմնադրի լիազոր ներկայացուցիչ կարող են նշանակվել միայն պետական կառավարման մարմինների պատասխանատու աշխատողները:

8.4 Սույն կանոնադրության 8.2 կետի 12,13,14,16,17,18,19 ենթակետերով նախատեսված դեպքերում որոշումներն ընդունվում են բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից գործադիր մարմնի ներկայացմամբ:

8.5 Հիմնադիրը, Ընկերության միակ բաժնետիրոջ իրավունքով, օրենքով և սույն կանոնադրությամբ բաժնետերերի ընդհանուր ժողովին վերապահված լիազորություններն իրականացնում են միանձնյա:

8.6 Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության գործադիր մարմինը, որը կարող է լինել կոլեգիալ (վարչություն, տնօրինություն) և (կամ) միանձնյա (տնօրեն, գլխավոր տնօրեն): Գործադիր մարմինը հաշվետու է բաժնետերերի ընդհանուր ժողովին:

Ընկերության գործադիր մարմինը՝

1. Տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում Ընկերության անունից,
2. Ներկայացնում է Ընկերությունը ՀՀ- ում և արտասահմանում,
3. Գործում է առանց լիազորագրի
4. Տալիս է լիազորագրեր,

5. Սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,
6. Բանկերում բացվում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ տարադրամային) և այլ հաշիվներ,
7. Առաջարկություններ է նախապատրաստում Ընկերության վճարվող շահաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ,
8. Հաստատում են Ընկերության առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները և նշանակում դրանց ղեկավարներին.
9. Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ , տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
10. Սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին.
11. Աշխատակցի նկատմամբ կիրառում է կարգապահական պատասխանատվության և խրախուսման միջոցներ:

9.ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

9.1 Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն ընտրում է Ընկերության վերահսկող հանձնաժողով / վերստուգող/:

Վերահսկող հանձնաժողովը / վերստուգողը / հետևվում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունը օրենքներին այլ իրավական ակտերին և Ընկերության կանոնադրությանը:

Վերահսկող հանձնաժողովը / վերստուգողի / գործունեության կարգը սահմանվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատվող ներքին փաստաթղթերով՝ վերստուգող հանձնաժողովի /վերստուգողի/ կանոնակարգով:

Վերահսկող հանձնաժողովը / վերստուգողը / իրավունք ունի իրականացնել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ, Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, ինչպես նաև Հիմնադրի պահանջով:

Վերստուգող հանձնաժողովն (վերստուգողն) իրավունք ունի պահանջելու Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին գումարման:

Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) պահանջով նրան պետք է ներկայացվեն Ընկերության, դրա մասնաճյուղերի ու ներկայացուցչությունների ֆինանսական գործունեության վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:

Վերստուգող հանձնաժողովի անդամները (վերստուգողը) ընտրվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից 3 տարի ժամկետով:

Վերստուգող հանձնաժողովի անդամները (վերստուգողը) հաշվետու են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին:

Վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) վարձատրության կամ վճարվող փոխհատուցման չափերը և պայմանները սահմանվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ:

Վերստուգող հանձնաժողովի անդամ (վերստուգող) - կարող են լինել Ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված ֆիզիկական անձինք:

Վերստուգող հանձնաժողովի նախագահն ընտրվում է վերստուգող հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

9.2Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ վերստուգող հանձնաժողովի իրավասությունները կարող են դրվել վերստուգողի վրա:

9.3Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Ընկերությունը կարող է ներգրավել արտաքին աուդիտորների (կազմակերպության կամ ֆիզիկական անձի) կնքելով նրանց հետ համապատասխան պայմանագրեր: Ընկերության աուդիտն իրականացնող անձն Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման արդյունքում ներկայացնում է գրավոր եզրակացություն: Ընկերության աուդիտն իրականացնող անձը հաստատվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից: Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ պայմանագրեր կնքվում են ընկերության գործադիր մարմնի կողմից, իսկ աուդիտն իրականացնող անձի ծառայությունների համար վճարվող գումարի չափը որոշվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

10 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

10.1 Ընկերությունը չունի մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

11.ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

11.1 Ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը ինչպես նաև Ընկերության կանոնադրության նոր խմբագրությամբ հաստատելը տեղի է ունենում բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ:

11.2 Մասնաճյուղի և (կամ) ներկայացուցչության ստեղծման կամ գործունեության դադարեցման հետ կապված տեղեկությունները մտցվում են Ընկերության կանոնադրության մեջ:

11.3 Ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ, ինչպես նաև ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրությունը երրորդ անձանց համար իրավաբանական ուժ են ձեռք բերում դրանց պետական գրանցման պահից, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նման գրանցում կատարող պետական մարմնին այդ փոփոխությունների մասին տեղեկացնելու պահից:

12.ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

12.1 Ընկերությունը կարող է վերակազմակերպվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով միաձուլման, միացման, բաժանման, առանձնացման և վերակազմավորման ձևով:

Ընկերությունը, բացառությամբ միացման ձևով վերակազմակերպման դեպքի, վերակազմակերպված է համարվում նոր ստեղծված իրավաբանական անձանց պետական գրանցման պահից: Ընկերությունն այլ Ընկերության միացման ձևով վերակազմակերպելիս, նրանցից առաջինը համարվում է վերակազմակերպված միացված Ընկերության գործունեությունը դադարելու վերաբերյալ այդ Ընկերությունների պետական գրանցամատյանում գրառման պահից:

Վերակազմակերպման արդյունքում ստեղծված ընկերությունների պետական գրանցումը և վերակազմակերպման արդյունքում իրենց գործունեությունը դադարեցրած Ընկերությունների գործունեության դադարման մասին գրառումը կատարվում է օրենքով սահմանված կարգով՝ կազմակերպությունների պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից:

12.2 Ընկերության լուծարումը հանգեցնում է Ընկերության գործունեության դադարմանը առանց ընկերության իրավունքների և պարտականությունների իրավահաջորդությունների կարգով այլ անձանց փոխանցման:

Ընկերությունը կարող է լուծարվել՝

1. նրա Հիմնադրի որոշմամբ՝ ներառյալ այն ժամկետը լրանալու կապակցությամբ, որով ստեղծվել է Ընկերությունը , կամ այն նպատակին հասնելու կապակցությամբ, որի համար նա ստեղծվել է.

2. դատարանի կողմից Ընկերության գրանցումն անվավեր ճանաչելու դեպքում՝ կապված այն ստեղծելու ժամանակ թույլ տրված օրենքի կամ այլ իրավական ակտերի խախտումների հետ.

3. դատարանի վճռով՝ առանց թույլտվության (լիցենզիայի) կամ օրենքով արգելված գործունեություն իրականացնելու, օրենքի կամ այլ իրավական ակտերի բազմակի կամ կոպիտ խախտումների դեպքում.

4. սնանկության հետևանքով.

5. Օրենքով նախատեսված այլ հիմքերով:

Լուծարային հանձնաժողովի կազմում պետք է ընդգրկվեն Հիմնադրի ներկայացուցիչներ:

Նախքան լուծարման մասին որոշում ընդունելը Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը պետք է հաստատի գործադիր մարմնի կողմից ներկայացված ամփոփիչ հաշվեկշիռն ու Ընկերության լուծարման նախագիծը:

Լուծարումն իրականացվում է Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

Ընկերության լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գործունեությունը դադարած՝ պետական գրանցող մարմնում համապատասխան գրառում կատարելու պահից:

16

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
Սյունիքի մարզպետի 2009թվականի
մայիսի 5--ի թիվ. 92 Ա որոշմամբ
ՀՀ Սյունիքի մարզպետ՝

Ս.Խաչատրյան

« 5 » մայիսի 2009թ.

Տպագրված է ընդամենը 5 օրինակ
ՕՐԻՆԱԿ 3 -
ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 03.12.1996թ..
Գրանցման թիվ- 27.140.00680
Վկայական 01Ա 030079
30.12..2000թ. գրանցված կանոնադրության
Թիվ 0013 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի Կապանի տարածքային բաժնի
կողմից « 11 » մայիս 2009թ
Կապանի Տ/Բ պետ՝

Կ.Հովհաննիսյան

«ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՆՅԱՐԴԱՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

/ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ/

1. «ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՆՅԱՐԴԱՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության
մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
1). Ընկերության կանոնադրության 1.4. կետը կարդալ հետևյալ խմբագրությամբ.
Ընկերության ֆիրմային անվանումն է՝
հայերեն լրիվ՝ «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերություն
կրճատ՝ «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր » ՓԲԸ
ռուսերեն լրիվ՝ Закрытое Акционерное Общество <<Сюники марзаин нярдаогебужакан диспансер>>
կրճատ՝ ЗАО <<Сюники марзаин нярдаогебужакан диспансер>>
անգլերեն լրիվ՝ <<Syniki marzain nyardahogebujakan dispanser>> Closed joint-stock company
կրճատ՝ <<Syniki marzain nyardahogebujakan dispanser>>Closed J-S Company
2. Սույն փոփոխությունը հանդիսանում է ՀՀ Սյունիքի մարզի «ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՆՅԱՐԴԱՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության / գրանցված 30.10.2000թ./ բաղկացուցիչ մասը:

Սյունիքի մարզ, ք.Կապան --2009թ